

# Գնումների Հատուկ Ծանուցում

Երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն  
Ծրագրի անվանումը՝ **Ռոտզման համակարգերի բարելավման ծրագիր** (ՈՀԲԾ)  
ՎՋՄԲ փոխառության No.՝ 8267AM  
Պայմանագրի անվանումը՝ **“Գեղարդալճի ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում”**  
(երեք լոտով)  
Պայմանագիր No.՝ ISEP/ICB/CW-14/002

## Մրցութային Առաջարկներ Ներկայացնելու Հրավեր (ՄԱՆՀ)

- Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել ՀԲ-ից՝ **“Ռոտզման համակարգերի բարելավման ծրագիր”** ծախսերը հոգալու նպատակով և մտադիր է այդ միջոցների մի մասն օգտագործել **“Գեղարդալճի պատվարի վերակառուցում” ISEP/ICB/CW-14/002-1 (Լոտ#1), “Մագիստրալ խողովակաշարի ՆԿ0+00-ՆԿ133+00 հատվածի կառուցում” ISEP/ICB/CW-14/002-2 (Լոտ#2) և “Մագիստրալ խողովակաշարի ՆԿ133+00-ՆԿ258+64 հատվածի կառուցում” ISEP/ICB/CW-14/002-3 (Լոտ#3)** պայմանագրերի շրջանակներում վճարումներ կատարելու համար: Այս պայմանագրերի վճարումները իրականացվելու են Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության համատեղ ֆինանսավորմամբ: Մրցութային գործընթացը ղեկավարվելու է ՀԲ-ի կանոններով և ընթացակարգերով:
- «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն (ՋՏԾԻԳ ՊՀ)** հրավիրում է մրցույթի իրավասու մասնակիցներին փակ մրցութային առաջարկներ ներկայացնել հետևյալ շինարարական աշխատանքներն իրականացնելու համար՝ **հողային, բետոնային և մեկուսացման աշխատանքներ; խողովակներ և խողովակային ամրաններ; մետաղական կառուցվածքներ; մոնիտորինգի սարքավորումներ և այլն (ըստ ԱԾՑ):**

Շինհրապարակները գտնվում են՝

Լոտ#1՝ ՀՀ Կոտայքի մարզ, Երևան քաղաքից 65կմ, իսկ Գողթ գյուղից՝ 10կմ հեռավորության վրա:

Լոտ#2՝ ՀՀ Կոտայքի մարզ, Երևան քաղաքից 65-78կմ, իսկ Գողթ գյուղից՝ 23կմ հեռավորության վրա:

Լոտ#3՝ ՀՀ Կոտայքի մարզ, Գեղարդի, Հացավան և Ողջաբերդ գյուղերից՝ 12կմ հեռավորության վրա:

Աշխատանքների նախատեսված ավարտման ժամկետները.

Լոտ#1՝ 24 (քսան չորս) ամիս (ներառյալ վեգետացիոն ժամանակահատված);

Լոտ#2՝ 12 (տասներկու) ամիս; և

Լոտ#3՝ 14 (տասչորս) ամիս:

Ծանոթություն՝

**Լոտ** 1-ով նախատեսվում է իրականացնել պատվարի վերակառուցում և օժանդակ կառուցվածքների վերականգնում (Գեղարդալճի պատվարի վերակառուցում, վարարային ջրհեղի հեռացումը ջրանցքի, ոռոգման ջրթողի, մոտեցնող ջրանցքի վերականգնում): Վերակառուցումը պետք է այնպես կազմակերպվի, որ չխոչընդոտի ջրամբարից մատակարարվող հողերի ոռոգմանը: Տևողությունը 24 օրացույցային ամիս է: Այդ ժամանակահատվածում Կապալառուն իրավունք կունենա օգտվել տեխնոլոգիական ընդմիջումներից ջրամբարը լցնելու և ոռոգման սեզոնի ընթացքում, ինչպես նաև շինհրապարակում խիստ ծանրային պայմանների պատճառով: Հաշվի առնելով ոռոգման սեզոնը, 1-ին լոտով շինարարական աշխատանքները հնարավոր կլինի իրականացնել, փաստորեն, սեպտեմբերի 15-ից մինչև մարտ ներառյալ: Սակայն, քանի որ

ջրամբարը գտնվում է 2710 մ բարձրության վրա, դեկտեմբերից մինչև մարտ գործնականում հնարավոր չի լինի մոտենալ շինհրապարակին և իրականացնել շինարարական աշխատանքներ: Այնպես որ, կապալառուն իր տրամադրության տակ կունենա միայն սեպտեմբերից-նոյեմբեր ընկած ժամանակահատվածը: Գրանից դուրս շինարարական աշխատանքներ հնարավոր կլինեն միայն մոտեցնող ջրանցքի և վարարային ջրհեռի հեռացնող ջրանցքի վրա: Շինարարական աշխատանքների լավ կազմակերպման դեպքում բետոնային պարապետի շինարարությունը հնարավոր է այն ժամանակ, երբ ջրամբարում ջրի մակարդակը իջնի պարապետի հիմքից ցածր:

- **Լոտ 2-ով** կկառուցվի մագիստրալային խողովակաշարի ՆԿ0+00-ՆԿ133+00 հատվածը (մագիստրալային խողովակաշարի 13.355 կմ հատվածի կառուցում՝ l=9840մ, d=500մմ պողպատյա խողովակներով և l= 3510մ, d= 500մմ ապակյա մանրաթելային (GRP) խողովակներով): Այս լոտի տևողությունը 12 օրացույցային ամիս է: Այդ ժամանակահատվածում Կապալառուն իրավունք կունենա օգտվել տեխնոլոգիական ընդմիջումից խիստ ձմեռային պայմանների պատճառով, քանի որ շինհրապարակը գտնվում է 2700-2000մ բարձրության վրա:

- **Լոտ 3-ով** կկառուցվի մագիստրալային խողովակաշարի ՆԿ133+00-ՆԿ258+64 հատվածը (մագիստրալային խողովակաշարի 12.711 կմ հատվածի կառուցում՝ l=8390մ, d=500մմ և l=2421մ, d=400մմ պողպատյա խողովակներով և l=1900մ, d= 400մմ GRP խողովակներով) և 3.637 կմ երկարության Գեղաղի-Հացավան ճյուղը (3.637 կմ երկարության Գեղաղի-Հացավան խողովակաշար՝ l=2411մ, d=219մմ և l=1226մ, d=250մմ պողպատյա խողովակներով): Այս լոտի տևողությունը 14 օրացույցային ամիս է: Այս տեղամասերը գտնվում են 1420-2150մ բարձրությունների վրա, ուստի մագիստրալային խողովակաշարի որոշ հատվածներում հնարավոր է տեխնոլոգիական ընդմիջում ձմեռվա ժամանակահատվածում:

#### Որակավորման չափանիշներն են.

- **Վերջին 5 (հինգ) տարիների** ընթացքում շինարարության գծով նվազագույն միջին տարեկան շրջանառություն՝ հաշվարկված որպես շարունակվող և/կամ ավարտված պայմանագրերով ստացված վճարումների ընդհանուր գումար, բաժանած 5-ի.

- Լոտ#1՝ 717,000,000.0 ՀՀԴ (կամ 1,490,000.0 ԱՄՆ դոլարին համարժեք),
- Լոտ#2՝ 1,900,000,000.0 ՀՀԴ (կամ 3,950,000.0 ԱՄՆ դոլարին համարժեք); և
- Լոտ#3՝ 1,500,000,000.0 ՀՀԴ (կամ 3,119,000.0 ԱՄՆ դոլարին համարժեք):

- **Մրցույթի մասնակիցը պետք է ցույց տա, որ նա կարող է ստանալ, կամ նրա համար մատչելի են իրացվելի ակտիվներ, չգրավադրված անշարժ գույք, վարկային գծեր կամ այլ ֆինանսական միջոցներ (սակայն ոչ որևէ պայմանագրով ստացված կանխավճար), որոնք բավարար են շինարարության ընթացքում կանխիկ դրամի հետևյալ հոսքերն ապահովելու համար.**

- Լոտ#1՝ 159,300,000.0 ՀՀԴ (կամ 331,000.0 ԱՄՆ դոլարին համարժեք)՝ հանած մրցույթի մասնակցի այլ պարտավորությունները,
- Լոտ#2՝ 422,200,000.0 ՀՀԴ (կամ 878,000.0 ԱՄՆ դոլարին համարժեք)՝ հանած մրցույթի մասնակցի այլ պարտավորությունները,
- Լոտ#3՝ 333,350,000.0 ՀՀԴ (կամ 693,000.0 ԱՄՆ դոլարին համարժեք)՝ հանած մրցույթի մասնակցի այլ պարտավորությունները,

- **Յուրաքանչյուր լոտի համար՝ 2010թ. հունվարի 1-ից մինչև մրցութային առաջարկի ներկայացման վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածում, մասնակցություն գոհացուցիչ կերպով և էապես ավարտված հիդրոտեխնիկական կառուցվածքի շինարարության առնվազն 1 (մեկ) պայմանագրում՝ որպես գլխավոր կապալառու, համատեղ ձեռնարկումի անդամ, կառավարման կապալառու կամ ենթակապալառու (Լոտ 1- համար՝ պատվարի կառուցում և հիդրոտեխնիկական օբյեկտներ - օրինակ՝ ջրառ հանգույց, մայր և երկրորդ կարգի ջրանցքներ, խողովակաշարեր)), ((Լոտ 2 և 3- համար՝ հիդրոինժեներական օբյեկտներ - օրինակ՝ ջրառ հանգույց, մայր և երկրորդ կարգի ջրանցքներ, խողովակաշարեր)), որի արժեքը լինի.**

- Լոտ#1՝ առնվազն 764,800,000.0 ՀՀԴ (կամ 1,590,000.0 ԱՄՆ դոլարին համարժեք);

- Լոտ#2՝ առնվազն 1,013,000,000.0 ՀՀԴ (կամ 2,100,000.0 ԱՄՆ դոլարին համարժեք);
- Լոտ#3՝ առնվազն 933,400,000.0 ՀՀԴ (կամ 1,940,000.0 ԱՄՆ դոլարին համարժեք):

➤ Վերոհիշյալ կամ այլ ավարտված պայմանագրերում, կամ այլ իրականացվող պայմանագրերում, 2010թ. հունվարի 1-ից մինչև մրցութային առաջարկի ներկայացման վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածում, մասնակցություն հետևյալ հիմնական աշխատանքների նվազագույն ծավալների հաջող կատարմանը՝ որպես գլխավոր կապալառու, համատեղ ձեռնարկումի անդամ, կառավարման կապալառու կամ ենթակապալառու.

#### Լոտ#1

- Հողային աշխատանքներ – 56,000մ<sup>3</sup> (վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում);
- Հիդրոտեխնիկական բետոն - 2,920մ<sup>3</sup>(վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում);

#### Լոտ#2

- Խողովակաշար - 10,792մ (վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում);
- Հողային աշխատանքներ – 46,400մ<sup>3</sup> (վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում);
- Հիդրոտեխնիկական բետոն - 136մ<sup>3</sup> (վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում):

#### Լոտ#3

- Խողովակաշար - 16,160մ (վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում);
- Հողային աշխատանքներ – 63,600մ<sup>3</sup> (վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում);
- Հիդրոտեխնիկական բետոն - 368մ<sup>3</sup> (վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում):

*Պահանջվող հիմնական աշխատանքների ծավալը կարող են ցույց տրվել մեկ կամ մի քանի պայմանագրեր միավորելու միջոցով (առավելագույնը երեք), եթե դրանք իրականացվել են նույն ժամանակահատվածում:*

#### ➤ Անձնակազմ և սարքավորումներ

Երկու կամ երեք լոտերին (պայմանագրերին) որակավորված լինելու համար մրցույթի մասնակիցը պետք է բավարարի, համապատասխանաբար, երկու կամ երեք լոտերով (պայմանագրերով) սահմանված պահանջների հանրագումարին (անձնակազմի և սարքավորումների մասով պահանջների մանրամասները բերված են մրցութային փաստաթղթերում):

Իրավասու տեղական կապալառուներին/համատեղ ձեռնարկումներին նախապատվություն **չի տրվելու:**

Մրցույթի մասնակիցները կարող են մրցութային առաջարկներ ներկայացնել մեկ կամ երեք լոտերի (պայմանագրերի) համար, ինչպես սահմանված է մրցութային փաստաթղթերում: Եթե մրցույթի մասնակիցները ցանկանան առաջարկել զեղչեր մեկից

ավել պայմանագիր ստանալու/շնորհվելու համար, դա հնարավոր կլինի այն դեպքում, եթե այդ գեղչերը ներառվեն Մրցութային առաջարկի մասնակում:

3. Մրցույթը անց է կացվելու **Միջազգային մրցութային սակարկությունների (ՄՄՍ)** ընթացակարգի համաձայն, որը սահմանված է Համաշխարհային Բանկի ուղեցույցներում՝ **“Ապրանքների, աշխատանքների, և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՉՎԱԲ-ի փոխառությունների և ՉԱԲ-ի վարկերի ու դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի փոխառումների կողմից” (2011թ. հունվար, վերանայված 2014թ. հուլիսին)**։ Մրցույթը բաց է մրցութային փաստաթղթերով սահմանված բոլոր իրավասու մասնակիցների համար։ Ի լրումն, խնդրում ենք ուշադրություն դարձնել 1.6 և 1.7 կետերի վրա, որով սահմանվում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:
4. Մրցույթի շահագրգիռ իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ «**ՉՏԾԻԳ**» **ՊՀ-ից (Մամվել Կարապետյան՝ պլանավորման և մախազման ճարտարագետ. հեռ: +37441 111-402; էլ. փոստ: [skarapetyan@wsdp.am](mailto:skarapetyan@wsdp.am))** և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը ներքո նշյալ հասցեով՝ բոլոր աշխատանքային օրերին ժամը **10:00-ից մինչև 17:00**.
5. Շահագրգիռ մասնակիցները կարող են ձեռք բերել մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը **անգլերեն լեզվով**, ներկայացնելով գրավոր դիմում ներքոհիշյալ հասցեով և վճարելով **150 ԱՄՆ դոլար** կամ **70,000 ՀՀ դրամ** չհատուցվող գումար: Նշված գումարի վճարման եղանակն է բանկային փոխանցումը հետևյալ հաշվին.

**Շահառու. ՀՀ ֆինանսների մախարարություն/կենտրոնական գանձապետարան**  
**Հաշվի համարներ. 900000906074 (\$ԱՄՆ) կամ 900000906082 (ՀՀ դրամ)**

Մրցութային փաստաթղթերը կառաքվեն օդային փոստով (Երևանից դուրս առաքելու դեպքում) կամ առձեռն կհանձնվեն մրցույթի մասնակցի ներկայացուցչին: Երևանից դուրս առաքելու պարագայում տեղափոխման համար կգանձվի լրացուցիչ **150 ԱՄՆ դոլար** կամ **70,000 ՀՀ դրամ**: Բացի դրանից, մրցութային փաստաթղթերը կտրամադրվեն մրցույթի մասնակիցներին մաս էլեկտրոնային եղանակով: Տպված և էլեկտրոնային տարբերակների միջև հակասությունների դեպքում տպված տարբերակը գերակայում է:

6. Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով **2015թ. սեպտեմբերի 18-ին ժամը 16:00-ին (Երևանի ժամանակով)** կամ ավելի վաղ: Էլեկտրոնային եղանակով մրցութային առաջարկների ներկայացում **չի թույլատրվում**: Ուշացված մրցութային առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները կբացվեն բացմանը մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցների ներկայացուցիչների ներկայությամբ **2015թ. սեպտեմբերի 18-ին ժամը 16:00-ին (Երևանի ժամանակով) ներքո նշված հասցեում**:
7. Մրցութային առաջարկները պետք է ուղեկցվեն **Մրցութային առաջարկի երաշխիքով (բանկային երաշխիք)**, որի գումարն է.
  - Լոտ#1 19,120,000 ՀՀԴ- կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով՝ մրցութային երաշխիքի թողարկման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի փոխարկման կուրսով;
  - Լոտ#2՝ 25,332,000 ՀՀԴ- կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով՝ մրցութային երաշխիքի թողարկման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի փոխարկման կուրսով;

- Լոտ#3՝ 23,335,000 ՀՀԴ- կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով՝ մրցութային երաշխիքի թողարկման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի փոխարկման կուրսով:

8. Վերևում հիշատակվող հասցեն է.

**«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ  
Պրն. Ֆելքս Մելիքյան, տնօրեն**

Պրն. Սամվել Կարապետյան, պլանավորման և մախագծման ճարտարագետ

Պրն. Մարտին Չարյան, գնումների մասնագետ

**Հայաստանի Հանրապետություն, Երևան 0033, Բաղրամյան փ. 75/44**

**Հեռ՝ (+37410) 277-943 (ընդունարան); 266-058 (գնումների բաժին)**

**Էլ. փոստ՝ [fmelikyan@wsdp.am](mailto:fmelikyan@wsdp.am); [skarapetyan@wsdp.am](mailto:skarapetyan@wsdp.am); [mcharyan@wsdp.am](mailto:mcharyan@wsdp.am);**

